


1999

ԿՐԻՔՈՐ ԱՐԺՐՈՒԹԵՒ


ԹԻՒՐԳԱՑ ՀԱՅԵՐԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
«ՄԱԿԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ



ԳԼՈՒ 20 ԿՐԻՔՈՐ



1894
ԹԻՒՐԳԱՑ

ԿՐԻՔՈՐ ԱՐԺՐՈՒՆԵ

ԹԻՒԲՔԱՑ ՀԱՅԵՐԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ

Հրապարակական դասախոսութիւն, որ տեղի ունեցած Թիֆլիսի Արևելաւորների ընկերութեան մէջ մարտի 11-ին, եւ Թիֆլիսի Սօրբանիայի դահլիճում մարտի 25-ին, 1879 թւին:

Վ 31

ՀՐԱՑԱՐԱՆՈՒԹԻՒՆ
«Մ Ճ Ա Կ Ի» ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ




4257.60

28. 255

ԹԻՖԼԻՍ
Արագածիալ տպարան Մ. Մարտիրոսյանցի եւ Հովհ.
Միքայելյան Փող. 80ին, № 81.

1894



ԹԻՒՐԳԱՅ ՀԱՅԵՐԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Հայաստանի ղիրը:—Գլխաւոր կէտերը Մեծ, Փոքր-
չայաստանի եւ կիմկայի:—Վարշավան բաժանումն
Մեծ-Հայաստանի:—Էրզրում բաղարը, որպէս կենտ-
րոն տրանզիտի ճանապարհի:—Հանքերը եւ մինե-
րալական հարստութիւնները կիմկայում:—Հան-
քային հարստութիւնները եւ Խողակուի անտառը
Խոսաստանին նոր միացած Կարսի նահանգի մէջ:
—Անտառները եւ վատելիքը Հայաստանում:—Ալաշ-
կերտի դաշտավայրը:—Կենդանիներ:—Աքօտատե-
ղեր:—Տնային կենդանիներ:—Խաշնարածութիւն եւ
անսանապահութիւն:—Երկրագործութիւն:—Բուսա-
կան հարստութիւններ:—Գինեգործութիւն, կաթնա-
յին տնտեսութիւն, շերամապահութիւն, այգեգոր-
ծութիւն եւ պարտիզանութիւն:—Ազգարնակութիւն.
Թիրքերը, Հայերը եւ Քիրդերը:—Երեք ցեղերի մէջ
կնոջ դրութիւնը:—Արևսատները:—Հայումին որպէս
աշխատող կին:—Հայերը, որոնք անխառն են ընակ-
վում Մանմատականներից:—Խոտոքուրի համայնքը:
—Զէյթունի ընկերական ողի:

ՑԻԿԻՆՆԵՐ ԵՒ ՊԱՐՈՒՆԵՐ

Ուղինալով ծանօթացնել ձեզ Հայաստանի տնտեսական
զբութեան հետ, ևս, որքան կարողացայ, աշխատեցի, հաւաքե-
ցի տեղեկութիւններ և վերաստուգեցի այդ տեղեկութիւնները
Հայաստանից բազմաթիւ եկողների և Հայաստանին ծանօթ իմ

Дозволено цензурою. Тифлисъ, 10-го Ноября 1894 г.

Ք 112 713



մի քանի բարեկամների օգնութեամբ: Այդ տեղեկութիւնները, որոնցից ես աշխատեցի կազմել Հայաստանի մի կենդանի պատկեր, ի հարկէ գեռ շատ պակասութիւններ ունեն:

Բայց եթէ ես կը կարողանամ ձեզ որ և է, ամենաթեթև, ամենաթոյլ, ամենափոքրիկ հասկացողութիւն տալ Հայաստանի քնական հարստութիւնների և նրա ժողովրդի անտեսական դրութեան վրա,—ես ինձ շատ բաղդաւոր կը համարեմ:

Այնուհետև թող ուրիշները լրացնեն իմ առաջին աշխատանքի պակասաւոր տեղերը, որ ինչպէս ամեն առաջին փորձ, միշտ թոյլ, պակասաւոր և անհաստատ է լինում:

Մեր խօսակցութեան առարկայ կը լինի թիւրքաց Հայաստանը և զլիսուորապէս Մեծ կամ Բարձր Հայաստանը: Զեր առաջ դրած Հայաստանի գեղեցիկ քարտէզը, որ յատկապէս իմ դասախոսութեան համար նկարել է իշխան Միքայէլ Բէհը ու թե եան, կտղմելով այդ քարտէզը Կովկասիան Զինուորական Վիճակի 1877 թւի և Վեհենցիայի Մխիթարեանների 1849 քարտէզների վրա, ներկայացնում է ձեզ Հայաստանի թէ քաղաքական բաժանումը և թէ նրա պատմական բաժանումը: Մի կողմից այդ քարտէզի վրա նշանակված են ուսուայ, թիւրքաց և պարսկաց Հայաստանի սահմանները, իսկ միւս կողմից երեսում են ահա Հայաստանի պատմական սահմանները: Անդրկովկասից դէսի հարաւ գտնվում է Մեծ-Հայաստանը, նրանից դէսի արևմուտք տարածվում է Փոքր-Հայաստանը, որ Մեծ-Հայաստանից աւելի նուազ հայոց ազգարնակութիւն ունի, իսկ այդ վերջին երկրից գէտի հարաւ գտնվում է Կիլիկիա, որ յայտնի է իր քաջ լեռնարնակ հայերով:

Իշխան Բէհրութեանի քարտէզի վրա նշանակված են Հայաստանի զլիսաւոր գետերը և այդ երկրի զլիսաւոր կէտերը, այն կէտերը միայն, որոնք հարկաւոր էին իմ գասախօսութեան համար և որոնք նշանաւոր են կամ որպէս բնակատեղի վալիի, կայ մակամի և միւգիրի, կամ որպէս մեծ կենարօններ և այս կամ այն արդիւնարերութեան տեղեր:

Սրանք են Մեծ-Հայաստանի զլիսաւոր կէտերը, երգում, Հաստան-Գալա, Նարիման, Խնիս, Երզնկա, Քայրեղ, Ցիսրի,

Կիսկիմ, Ալաշկերտ, Բայազէթ, Վան, Բաղէշ, (Բիթլիս), Սուշ, Սղերթ, Գիւարբէքիր (Տիգրանակերտ), Եղեսիա, Խարբերդ: Այդ բոլոր նշանաւոր կէտերը շրջապատված են երկու-երեք հարիւր գիւղերով, որոնց երեք չարլորդականը գրեթէ, հայարնակ են: Փոքր-Հայաստանում ես կը ցիեմ հետեւեալ տեղերը. Արագիւր, Կամախ, Գիւմիշ-Խանէ, Տրավիզոն, Թիզէ, Եւրոկիա (Թուստ), Սվազ (Սեբաստիա), Կարայիսար, Կէսարիա, Ամասիա՝ Փոքր-Հայաստանի արևմտեան ծայրում և Մարաշ՝ Կիլիկիայի սահմանի վրա: Կիլիկիայում գուք տեսնում էք նշանակված Աղանա, Անթափ և Զէյթուն տեղերը: Փոքր-Հայաստանից գուրս, բուն Փոքր-Ասիայում նշանակված էք տեսնում Անգօրա քաղաքը:

Վերջապէս քարտէզի վրա դուք նշանակված էք տեսնում մի քանի ամենանշանաւոր տեղեր Խուսաստանին նոր միացած Կարսի նահանգի մէջ, որոնք են Կարս, Կաղզման, Օլթի և Բաթում:

Մեր խօսակցութեան առարկան, ինչպէս ասուցի, կը լինի զլիսաւորապէս Մեծ կամ Բարձր Հայաստանը: Ամբողջ Հայաստանը շատ բարձր գիրք ունի, շրջապատված ամեն կողմից սարերի շղթաներով, որ և ասիթ է տուել մի գերմանացի նշանաւոր աշխարհագրին անուանել Հայաստանը մի օդային սարսա կզզի (eine lustige Berginsel): Բայց ամենաբարձր գիրք ունի Մեծ-Հայաստանը, որ իր երգում քաղաքով, կաղմում է Հայաստանի միջին կէտը: Մեծ կամ Բարձր Հայաստանը, թիւրքաց կառավարութեան տակ գտնվելով, բաժանվում է երեք վլւայ էթեն երի վրա՝ որոնք են Դիարբէքիրի, Վանի և Երզրումի վլւայէթները: Երզրում կամ Կարին քաղաքը, մինչև վերջին սուս-թիւրքաց պատերազմի սկիզբը և վերջը, եղել է Թիւրքիայից Պարսկաստան և իրավադապէս անցնող տրանզիտի ճանապարհի կենտրոն: Քարավանի ճանապարհի միջին կէտը Երզրումն էք կաղմում, իսկ երկու ծայրական կէտերը՝ Տրավիզոն և Բայազէթն էին:

Այդ էր պատճառը, որ տրանզիտի այս ճանապարհը չը խստանելու համար Անգլիան ամեն ջանքեր գործ դրեց Բեր-

լինի կօնդրեսի ժամանակ, որ Բայազեթը յևս տրվի Թիւրքիային: Այդ կէտը գրեթէ չունի ուրիշ նշանակութիւն, բացի արեւական հաղորդակցութեան կէտ լինելուց: Այսպիսի մի կննարոնում, ինչպէս է Երզրումը, Կ. Պօլսից եկող ապրանքը պատահում էր Պարսկաստանից անցնող անմշակ, հում բերքերի հետ: Այդտեղ թափում էին, նոյնպէս, ամեն կողմերից Հայաստանի թէ բնական բերքերը և թէ գաւառացի հայոց աղբարնակութեան ձեռքերի վաստակը, աշխատասէր հայի և հայուհու արդիւնագործութիւնները: Այսպիսով թէ բնիկ և թէ օտարական հայ առեարականներ, նոյնպէս և պարսիկ, յոյն, երբեմն և Եւրօպայի վաճառականներ հաւաքվելով Երզրումի մէջ, տալիս էին այդ քաղաքին կետանք և առեարական նշանակութիւն:

Անցնելով Հայաստանի բնական հարստութիւնների նկարագրութեան, ես կը սկսեմ հանքերից: Ամբողջ Հայաստանը լի է հանքային ջրերով և հանքերով: Շատ տեղ մարդ գուշակել կարող է, որ գետնի տակ պահպած են հարուստ հանքեր, որովհետեւ ամեն քայլափոխում հոսում են առատութեամբ հանքային ջրերը:

Երզրումից 30—40 վերատ հեռաւորութեամբ կան նաւթի առատ աղբիւրներ Հասան-Ղալայի շուրջը: Նաւթը շատ առատ է երևում և այդ նիւթը կարելի էր հաւաքել հարերից, ինչպէս Բագուի ջրակայքում, մշակել նրան և պատրաստել նրանից նուրբ ֆոտոգէն: Բայց մշակողներ չը կան, իսկ բնիկ ժողովուրդը օգտվում է այդ նիւթից ամենանապեսական ձևով: Բնակիչները իջևնում են հորերի մէջ փալասներով փաթաթված փայտեր և երբ որ նաւթը բաւական ծծվել է փալասների մէջ, տանում են տուն և գործ են ածում այդ ձևով հաւաքած նաւթը թէ վառելիքի և թէ լուսաւորութեան համար, նաւթի այդ նահապետական արդիւնահանութեամբ պարապում են Հասան-Ղալայի շուրջը գտնված բոլոր գիւղերը, թէ քրիստոնեաց և թէ մահմետական: Հասան-Ղալայի մօտ գտնվում է և մի ծծմբային հանք: Նոյն Հասան-Ղալայից ոչ հեռու դէմի Նարիմանի կողմը գտնվում են թաղված քարածութիւններ:

Խի շատ ընդարձակ պահեստներ: Երզրումի չորս կողմը գըտնվում են անթիւ ծծմբային և երկաթային հանքային ջըրեր, որոնք համարվում են բժշկական բնական միջոցներ, մանաւանդ կանանց հիւանդութիւնների դէմ: Այդ տեղերից ես կը յիշեմ ամենանշանաւորները՝ Իլիջա, Աղդալ, Սղբըլ: Կարսի նահանգում, որ պատերազմից յետոյ միացաւ Ռուսաստանին, գտնվում են նոյնպէս հանքեր. օրինակ Կաղաքանի մօտ կան հարուստ աղանդանութեամբ կայ մարմարիսնի մէս մի քարի տեսակ, որ գոյնգոյն է լինում և գետնից հանելու ժամանակ այնպէս վասփուկ է, որ նրան նշշտութեամբ կարելի է դանակով կտրել, բայց օդի աղղեցութեանը ենթարկվելով, սաստիկ պիղանում է: Օլթի կողմը գտնվում է մի տեսակ սև սաթ, որի նըմանը, ասում են, աշխարհիս ոչ մի տեղ չը կայ: Այդ քարը իր արտաքին տեսքով նման է գիշեր ասված ընտիր քարածութիւնի տեսակին, բայց իր յակութիւններով բոլորովին նման է սաթին և տեղացիներն ել անուանում են այդ քարը քահուր առուր բար, որ թիւրքերէն սաթ է նշանակում:

Նորերումս սկսեցին ուշադրութիւն գարձնել և Վանի նահանգում գտնված նաւթի հարուստ աղբիւրների վրա: Երզրումի վիլայէթում, Երզնկայից ոչ հեռու, Կամախիս անուանված տեղի շրջակայքում կայ մի աղանդ և նոյնպէս պատահում են այդտեղ քար ած ու խի հանքեր: Կամախիս մօտ գտնված ժայռոտ սարի մի կողմից բղխում է մի աղի աղբիւր, խի նոյն սարի միւս կողմից բղխում է մի հանքային աղբիւր, որ ձմեռ ժամանակ տաք է լինում, խի ամառ ժամանակ այնքան սառն, որ ժայռից բղխելուն պէս սառուց է կտրվում: Երզրումից 70 վերատ Դերջան ասված տեղի մօտ նոյնպէս մի աղանդ հանք կայ: Բայց ամենահարուստ աղանդ նը բար գտնվում են Մուշի կողմը: Շատերի կարծիքով այդ հանքերը այնպէս հարուստ են, որ եթէ ամբողջ Ասիայի աղանդները սպառվէին, Մուշի աղանդերը բաւական կը լինէին թէ ամբողջ Ասիային և թէ Եւրօպային աղ հայթայթել: Մուշը Փոքր-Ասիայի Կողբն է: Այդ հանքերից բղխում են աղի աղբիւրներ,

որոնք միանալով կազմում են մի աղի գետակ, որ իր թանգարին նիւթով, աղով, դժբաղուագէս ապարդիւն կերպով է վագում, որովհետեւ ընկնելով Մուրագ-չայ գետի մէջ, խառնվում է նրա ջրերի հետ և վերջապէս անհետանում է Նիբատի ջրերի մէջ:

Մուշից անցնելով Բիթլիս մենք գանում ենք նրա շրջակագրում զունելիս իմ հանք (սըրմա) որ բնակիչներին դեղին ներկ է տալիս: Բիթլիսի և Կիարբէրի գրեթէ կէս ճանապարհի վրա քանի մի տարի կայ, որ գտնվեցաւ մի հարուստ ողջին ձի համնք: Առաջասարդի պղինձի և երկաթի մադանները շատ բազմաթիւ են Հայաստանի ամբողջ տարածութեան վրա: Կը յիշեմ այստեղ, օրինակ, Եւդոկիայի կողմերից Ակնի մօտ գտնված պղինձի մատանները: Երկաթի և պղինձի տառատ մատանները, թէս անմշակ թողված, երևում են Յիսրիլի և Կիսրի մի շրջակագրում, որտեղ և ոսկու հին հանքերի հետքեր են նկատվում: Հաւատացնում են որ այդ երկրից (որ երդրումի և Տրավիզոնի գրեթէ կէս ճանապարհի վրա է գտնվում և հին Սօփիերըն է), խրայէլացիների Սոլոմոն Իմաստուն թագաւորը ուկի էր բերել տալիս, գործածելով այդ նիւթը Երուսաղէմի տաճարի շինութեան զարգարանքների վրա: Արծաթի ամենանշանաւոր հանքը գտնվում է Գիւմիւշ-խան է ասված տեղում, Երզրումի վիլայէթի սահմանում: Արծաթի այդ հանքը տեղացիներից շատ քիչ և ամենանահապետական ձևով է մշակվում:

Կիլիկիան էլ իր միներավական հարստութեան կողմից պակաս չէ մնացած Հայաստանի հարստութիւններից: Համեմատարար աննշան տարածութեան վրա գուք կը գտնէք՝ Զէյթուն քաղաքից ոչ հեռու երկաթի տառատ հանքեր, որոնք մշակվում են, որովհետեւ լիոնարնակ հայ ժողովուրդը այդ երկաթից իր համար զէնքեր է պատրաստում. նոյն տեղ և մի արծաթի հանք կայ, որ անմշակ է թողված: Քաղաքի չորս կողմը կան բաղմաթիւ հանքային, մանաւանդ ծծմբային ջրեր. Անթու քաղաքից ոչ հեռու գտնվում են ու և սպիտակ

մարմարինը, Սպիտակ մարմարինը, առում հն, շատ բնակիր է:

Հայաստանը հարուստ է այն բռւսականութեան կողմից, որ զարգանում է և պահպանվում է մարգու ձեռքով, բայց աղքատ է բնական բուսականութեան, անաստների կողմից: Եթէ Հայաստանի մի քանի տեղերում կան էլ հարուստ և խիտ անտառներ, նրանցից օգուտ քաղել, ճանապարհների պակասութեան պատճառով, զրեթէ անհարին է: Ամենահարուստ անտառներից մինը, Սոգանութեան ի անտառը, անցել է պատել աղմից յետոյ Խուսաստանի ձեռքը: Այդ անտառը հացթայթում էր թէ շինութեան և թէ վառելիքի համար փայտ ամբողջ Երզրումի վիլայէթին: Այժմ Երզրումի թէ քրիստոնեաց և թէ մահմետական ազգարնակութիւնը մնացել է զրեթէ առանց վառելիքի և բնակիչները չեն կարող նոյնականոր շինութիւններ կառուցանել և հիները նորոգել: Այս գրութեան մէջ սարու և ցուրտ Երզրումը, որ շատ բարձր գիրք ունի (6000 սանչովի ծովի մոկերեոյթից բարձր), զրկված է մնացել իր ամենաանհրաժեշտ պիտոյքից, վառելիքից և ասում են, որ վիլայէթի թէ քրիստոնեաց և թէ մահմետական ազգարնակութիւնը գաղթելու է այդ պատճառով: Լավում է որ Երզրումի վիլայէթի բնակիչների խնդրեքի հիման վրա թիւքքաց կառարութիւնը գիմեց մեր կառավարութեանը, խնդրելու վիլայէթի բնակիչներին հշանակված վարձով օգտվել Առանց լուսի անտառի փայտից: Ճշմարիտ է, զիւղերի մէջ վառարանները յարմարեցրած են աթարի գործածութեան, որպէս վառելիքի, բայց քաղաքների մէջ զա անհնարին է:

Ցոյց տալու համար թէ որչափ զգալի է փայտի պակասութիւնը այդ երկրում, ես կը յիշեմ այստեղ, որ այդ պատճառով արդիւնագործութիւնը Հայաստանի այդ մասում կանգ է առել: Օրինակ, Երզրումի վիլայէթում գտնված Եարան է առաջ նիւթի սպիրտի գործարանը ստիպվեցաւ փակվել փայտի պակասութեան պատճառով: Ի հարկէ, կարելի էր փայտի տեղ, որպէս վառելիք, զրեթածել նաւթի մնացրգներ, ինչպէս անում են Շապուի մէջ, որտեղ բոլորին փայտ չը կայ. կամ նոյն

ալէս քարտածուխ, որի հարուստ պահեստներ Հայաստանի տմեն քաղաքություն կան, բայց թէ քարտածուխի հանքերի և թէ նաւթի աղբիւրների արգիւնահանելու գործը մի մարդու ոյժերից վեր է, այլ զրա համար հարկաւոր է ընկերութիւններ կազմել և հաստատել... Բայց կարո՞ղ են արդեօք ընկերակցութիւններ գոյութիւն ունենալ թիւրբաց կառավարութեան կամայականութեան տակ,—չեմ կարծում:

Նար ի մանի մօտ գտնվում է թէն բաւական մեծ անտառ, բայց նա չունի յարմարութիւն ճանապարհների կողմից դէպի երգում: Անտառներ կան երգումի վիլայէթի կիս կիմ և Յիսրի գաւառում, Խոտոր ջուրի Վահրք և Զրանց գիւղերի վջականերում, կան թուփերից բազկացած անտառներ և Խնիսի կողմը,—բայց բոլորն էլ մնում են առանց արդիւնաշահվելու, զարձեալ յարակցութեան քիչ շատ օրինաւոր ճանապարհների բայցակայտութեան պատճառութիւնը և Երզընկայի մէջտեղ գտնվող Քիսի կողմերում կան մեծ քանտկաւթեամբ ընկոյզի ծառեր, որտեղից կոճ (կոչկուռ, հայլեմբ) է ստացվում: Այդ արգիւնքը օտարները վաճառահանում են Հայաստանից: Կան անտառներ նոյնպէս Թորթումի կողմերում և Վանի վիլայէթում: Բայց եթէ երգումցիները աւելի եռանդուտ լինեին և հետեւին հայերի հնագարեան սովորութեան, նրանք կարող էին զարգացնել իրանց երկրում արուեստական անտառներ, ինչպէս վերջին ժամանակներում էլ հայերը Խարք երդի կողմը բուօքը ել են մի հիանալի ցանովի անտառ բարդի ծառից:

Այդ բանի մէջ հայերը ասիական գերմանացիներ են: Արուեստական կերպով անտառների բուօքնելը նոր բան չէ երկում հայերի մէջ: Երեսում է որ այդ գործը նոյնքան սովորական էր հին հայերի համար, որքան արուեստական ջրանցքներ անցկացնելը: Օրինակ, ժողովրդական աւանդութիւն կայ, որ և Սօղանլուխի ահապին անտառը, որի մէջտեղ գտնվում է դեռ այժմ մի աւերակ հին եկեղեցի, արուեստական կերպով զարգացած է եղել մի հայոց թագաւորի հրամանով: Վերջապէս երգումի բնակիչները կարող էին իրանց փայտի անտառների մէջ առավագ առաջական անտառներից առաջ գտնվում է Ալաշկերտի վայրը, որտեղ բնակվում է Տէրսիմի քիւրդիրի լինութիւնը:

Ճանապարհներ լինեին Բայրերդի և Տըրտպիզոնի մէջ տեղ գտնվող հարուստ անտառներից, կամ թիւրքաց տիրապետութեան տակ մնացած Աջարստանի մասից, այն է Պիզէի կողմերի կուսական անտառներից: Անտառի սրակասութիւնը, մանաւանդ, զգացվում է Ալաշկերտի գաշտավայրի վրա, որ թէն հարուստ է սի, բերբի հողով և առաստ արօտներով, բայց կատարելապէս զուրկ է անտառներից: Որ և է հաստութեան փայտի գտնելը Ալաշկերտի բնակիչներից մինի տանը, զիեթէ հրաշք է համարվում այս գաշտավայրի գիւղերի մէջ, որտեղ վառելիքն է տթարը, մասսամբ էլ մի անսակ եղեցն, որ թիւրքերէն անտառնվում է եղջիւրի սուչ (սրպն կույրուղի): Այս փայտանման հաստ և ամուռ եղեղն, որ գործ է ածվում աթարի հետ միասին, որպէս նրան վառող նիւթ, գործ է ածվում, նոյնպէս, հողի կտուրների տակ դարսելու համար, իրբի առաստազ: Այդ պատճառով կտուրները լինում են այնչափ թոյլ, որ ամեննեին չէ կարելի նրանց վրա մանգալ: Հայերը, որոնք, ինչպէս ամեն տեղ, մշատրնակ կամ հաստատարնակ են, իրանց տների պատերը Ալաշկերտի գաշտավայրումն էլ շինում են քարից և հողից, իսկ քիւրդիրը, որոնք աստանգական և վրանարնակ կեանք են վարում, իրանց բոլոր բնակրանների պատերը շինում են այդ եղեղնից, ուրեմն նրանց տանը ոչ այն ինչ է, եթէ ոչ մի մեծ վանդակ եղեղնից գործված: Ալաշկերտը չէ կարող օգտիւլ և Սօղանլուխի, ոչ էլ Վանի նահանգի անտառներից, հեռաւորութեան և ճանապարհների բացակայութեան պատճառով:

Վերջացնելով անտառների մասին, պէտք է յիշեմ կարճ կերպով այն կենդանիներին, որոնք գտնվում են Հայաստանի անտառներում: Այդ կենդանիները զիմաստավէս սրանք են՝ արջ, զայռ, չակալ (չնաղայլ), եղջերու, վայրի այծ (քօչ), վայրի խոզ, վայրի ոչխար (տյրէ),—զիւթէ ամեն անտառներում: Խոտորջուրի անտառներում առասութեամբ զտնվում է կուզ (կոհուզ), իսկ Երզնկայի և Խարբերդի մէջտեղ զանվոզ այն բարձրութիւնների վրա, որտեղ բնակվում է Տէրսիմի քիւրդիրի լինութիւնը:

րի և Արգնկոցի մէջ, մանաւանդ Հարէշ ասված սարի վրա լի-
նում է վագը և գլուղացիները վկայում են, որ նոյն տեղ տե-
սած են և առ լւծ:

Եթէ մի կողմից Հայաստանը զրկված է բնական մի հարո-
տոթիւնից, անտառներից, ուրիշ կողմից բնութիւնը պարզել
է այդ երդին առաս ջրեր և հարուստ արօտատեղեր: Հայա-
ստանը գետ հին սպամութեան մէջ յայտնի էր իր պարարտ,
հոտաւէտ, հարուստ արօտներով: Հին ժամանելիներում Հայա-
ստանից վաճառահաննվում էին ձիեր, ամենասպնիւ տեսակի (նը-
ժոյգ): Յայտնի է որ փիւնիկեցիները Հայաստանից էին տա-
նում զուտարին ձիեր: Իրաւ, կարելի է ասել, որ Հայաստանի
արօտները ան սպառելի են: Վերջին պատերազմի ժամանակ
միմիայն երգրումի վիրացէթը կարողացաւ մի տարի ու կէսից
աւելի իր առատ խոտով կերակրել թէ մեր զօրքի և թէ թիւր-
քաց զօրքերի ձիերին և այնու ամենայնիւ խոռը չը պակասեց
և գիւղական ժողովրդի անասունների համար էլ: Դժուար է
ասել թէ Հայաստանի որ կողմը առանձնատիւ յայտնի է իր
գերազանց արօտներով: Հայաստանի տմեն տեղն էլ արօտ-
ները հրաշալի են և չքեղ, ցօղած առատ ջրերով, ամենազե-
ղեցիկ, հոտաւէտ ծաղիկներով լի պարարտ խոտով ծածկած:
Դրան թող վկայ լինեն Վ. ան ի նահանդի հրաշալի արօտները,
կամ Խնիսի կողմերի Բ. ի ւակն եան (հազար աղբիւրների)
սարերի (Քինգեօլի) արօտատեղերը, կամ երգրումից մօտ 40
վերստ հեռու, Եփրամի աղբիւրների մօտ գտնվող Խ աչա-
փայտի սարերի երեխի արօտները: Բայց չը նայելով հարուստ
բնական արօտների, աշխատական հայր շատ տեղ բռւցնում
է արուեստական արօտներ, ցանովի բազմատեսակ և հոտաւէտ
խոտով, մանաւանդ գործածելով դրա համար և օնջա ասված
խոռի սերմերը:

Իր աննման, գեղեցիկ արօտներին է պարտական Հայա-
ստանը իր հարուստ խաշնարածոթեամբ և անասնապահու-
թեամբ: Խաշնարածութեամբ պարապում են թէ հայ և ը և
թէ քիւրդերը: Բայց և այս պարապմունքի մէջ, ինչպէս ա-
մեն բանում, հայը չէ բաւականանում դրանով, ինչ որ տուել

է բնութիւնը, այլ աշխատում է որքան հնար է, լաւացնել,
աղնւացնել կենդանիների տեսակները: Ել չեմ խօսում այնպի-
սի տնապին կենդանիների վրա, ինչպէս կովերը և եղները, որոնք
զարմացնում են տեսնողին իրանց խոչոր տեսքով: Կը յիշեմ
այստեղ ոչ խարն երի մասին, որոնք շատ ընտիր են Հայա-
ստանում, օրինակ Վանի նահանգում, որտեղ ոչխարները այն-
քան չաղ զմակ ունեն, որ շատ անգամ կենդանին դժուարու-
թեամբ կարողանում է իր եամեկց քաշել իր հրէշաւոր զմակը,
այնպէս որ հնարագէտ հայ գիւղացին կապում է ոչխարի մէջ-
քից երկու անիւնների վրա դրվուծ, փայտից շինված մի փոքրիկ
սայլակ, որի վրա զրվում է ոչխարի զմակը և հեշտացնում է
կենդանուն արօտներում մանգտը: Ոչխարները մեծ քանակու-
թեամբ վաճառահանվում են Հայաստանից: Յայտնի է, օրինակ,
որ ամբողջ Եփալասով կերակրվում է գրեթէ միմիայն Հայա-
ստանից բերվող ոչխարի մաով: Շատ տներ, օրինակ կրպումի
մէջ, վաճառահանելով տարին խւարանչուրը 20—30 հազար
զլուխ ոչխար, հարաստացել են այդ տեսարով: Կը յիշեմ այս-
տեղ, որ Հայաստանի այլ և այլ տեղեր յայտնի են մասնաւորա-
պէս իրանց զանազան տնային կենդանիներով: Օրինակ,
Յիսրէլ-Ասկէմի վիճակը յայտնի է իր խոչոր տեսակի,
ուեղ ջորի նիւիրով, մի և նոյն ժամանակ Խնիսը յայտնի
է իր ահապին դոմէշն երով և ձիերի զուտարին տեսակով,
Մուշը նայնպէս իր ձիերի անժիւ երամակներով:

Հայը չէ բաւականանում առանձին խնամքով և մինչև ան-
գամ քնիչութեամբ հոգալ իր կենդանիների մասին, օրինակ
շարաթը մի անգամ անպատճառ լւզ քսել գոմէշների կաշու-
վրա, նրան կակուղ պահպանելու և կենդանուն թէ ցրտի և
թէ արեգակի տաքութեան դէմ սպաշտակնելու համար, բայց
աշխատում է աղնւացնել կենդանիների տեսակը, նրանց մէջ
կապակցութիւնների միջով, կամ, օրինակ, կուտցնելով իրար
հետ գոմէշներին, որպէս զի գորեղները յայտնվեն և այդ զօ-
րեղներին իրաւոնք արվի ընտիր ցեղը շարունակելու: Վ. ան ի
նահանգը զիստուրապէս յայտնի է անասնապահութեամբ: Այդ-
տեղ յայտնի են աղնիւ տեսակի, սպիտակ մազ ունեցող այ-

ծեր, որոնց տեղացիները քուլիկ են անուանում: Այդ կենդանին իր մազի յատկութեամբ պակաս չէ Սպանիայի մերին օս ասված ոչխարներից: Նոյն տեսակը կայ և Սղերթի և Քիթլիսի մէջ, թէև ոչ այնքան մեծ քանակութեամբ: Եթէ այծերի այդ տեսակը հայերը գորգացնէին, դա մեծ հարստութիւն կը լինէր Հայաստանի համար: Ֆուլիկ կայ և Փոքր-Ասիայի Անգօրա քաղաքի շրջականներում, որտեղ նրան մեծ քանակութեամբ են պահում հայերը և այծի այդ տեսակը շատ յայտնի է, բայց այնտեղ այդ կենդանին ուրիշ անուն է կրում.

Վերջացնելով անասնապահութեան մասին և անցնելով երկրագործութեանը և արհեստներին, կը յիշեմ այստեղ երկու խօսքով, որ Հայաստանի գետերը, գետակները և լճերը լի են բազմաթեսակ և համեղ ձևներով, իսկ անտառները և արտերը բազմատեսակ թռչուններով:

Հայաստանի երկրագործութիւնը, այդ բառի լայն նշանակութեամբ, չը նոյնեւով որ երկիրը շատ վաս է կտուավարվում և իր գիրքով նա կտրված է բոլոր լուսաւորված երկիրներից, կարելի է ասել համեմատաբար շատ ծաղկած դրութեան մէջ է, հողի բերրիւթեան և հայ ժողովրդի աշխատասիրութեան չնորհով: Հայաստանում ծաղկում է բուն երկրագործութիւնը, զինեգործութիւնը, պարտիզապահութիւնը, շերամապահութիւնը, մեղուաստանութիւնը, և այլն: Եւ ամբողջ երկրագործութիւնը, քիչ բացառութեամբ, հայերի ձեռքումն է: Վանի նահանգը և Աւաչկերտի գաղտավայրը յայտնի են ցորենով և գարիսվ: Դրանք են հայթայիթում հայը ամբողջ Թիւրքիային և կարող էին աւելի էլ ընդարձակ երկիրներին մատակարարել կեանքի առաջին պիտոքը, եթէ վաճառահանութեան համար միջոցներ լինեին: Վան արդիւնաբերում է նոյնպէս գինի և ընտիր մը գեր: Նշանաւոր է Վանի նուռալ, որ իր պատուաւոր տեղն է բւնում սուլթանների սեղանի վրա, նոյնպէս կան այդաղ առանձին տեսակի, մեծ խնձորներ (շահաբասի), որոնց կորիզները շարժվում են, երբ մարդը քիչ շարժելով միրգը, տանում է նրան իր ականջին: Աւաչկեր-

տի մէջ բացի ցորենից, բուսնում է սուսամ (կոնճյութ) և կտաւատ: Քիթլիս յայտնի է իր ծիախնտով, բայց մանաւանդ Մուշը, որի ծխախոտը պակաս չէ սամոսոն ասված տեսակից: Քիթլիս (Բաղէշ) հոչակաւոր է նոյնպէս իր գղթորվ (վերույն, օրթուկ), որի բեռները գնում են մինչև նւրօպա: Այդ բերքը առաջ է և Սղերթի մէջ, բայց Սղերթի հարստութիւնը այդ չէ միայն. նրա մէջ գուրս է գալիս սասափիկ շատ տորոն: Ինչպէս Մուշ և Բաղէշ մեղրի հայրինիքն են, որոնց անթիւ-գիրքակներից հաւաքվող մեղրը գընում է մինչի Կ. Պօլիս, այնպէս էլ Սղերթ մտնանայի հայրինիքն է:

Դատերը մեկանից կարդալով Աստուածաշնչի մէջ մտնանայի մասին, առասպեկտական կը համարէին երկնքից թափուղ բնութեան այդ տուրքը, մինչդեռ նրա գոյութիւնը Հայաստանում իսկական է: Գարնան և աշնան, վազ առաւօտները, զըրխաւրապէս կաղնիի ծառի տերմեների վրա, գոյանում են ցողանման մեղանամ կաթիւներ, որոնք փոքր առ փոքր պնդանում են օդի և տերեների սաւցնող ազդեցութեամբ: Բնակիչները հաւաքում են այդ հատիկները և այդպիսով սաւցիւմ է մի պատրաստ հալվա, որ վաճառահանվում է ամբողջ Փոքր-Ասիա: Կարծում են որ դա ծաղիկների հիւթն է, որ գոլորչիանում է զիշերներով և դիպչելով ծառերի սաւցնող տերեներին, գոյացնում է քաղցր ցողանման հատիկներ: Այդ կերպուրը մի լաւ գեղ է համարվում թոքային հիւնդութեան գէմ:

Մենք պարծենում ենք մեր կովկասեան գինին երիսվ, բայց ոչ մի զինի, իմ կարծիքով, չէ կարող համեմատվել Խարբերդի գինի վիճակ, որ սաւցիւմ է մի զերազանց խալուղից: Ես առիթ ունեցայ նորերում ինքս այդ զինին փորձելու: Նրա գերազանց համը, նրա արօմը, և մի և նոյն ժամանակ թնդութիւնը աննկարազելի են: Կարող եմ միայն այն ասել, որ նա, իմ կարծիքով, միջին տեղն է բոնում խերէսի և մադէր այս գինիների մէջ: Խարբերդ չեն բաւականանում զինեգործութեամբ պարտիզելով, այլ պարտիզում են նոյնպէս ընդարձակ շերտապատ և առաջին ամբական ամառաւում:

վում է և առատօրէն հաւաքվում է բամբակ և բրինձ: Ենրամալահութիւնը տարածված է Եւդոկիայում և Տրապիզոնում, բայց շերամապահութեան հայրենիքը Դիաքոբիրն է (Տիգրանակերտ), որ նոյնպէս նշանաւոր է բրինձի լայնատարած գաշտերով: Սերաստիա մեծ քանակութեամբ բուցնում է ճակնդեղ, Յիսորի և Կիոկիմ յայտնի են խաղողով, նոյն տեղերը, նոյնպէս Թոռթում և Ակն յայտնի են իրանց ընտիր, բազմատեսակ մրգերով, մանուանդ թութով: Պարտիզանութիւնը (քաստաններ, բանջարանոցներ) երեկի է թէ Վանի և թէ Երզրումի վիլայեթներում, բայց մանաւանդ Տիգրանակերտի կողմերը, որտեղ զլիաւորապէս նշանաւոր է իր քաղցր համով սեխը, և իր թէ հրեշտակ մեծութեամբ և թէ համով ձմերուկը: Առում են որ եթէ մի 8—10 տարեկան երեխայ նստի ձմերուկի վրա, ուսները գետնին չեն հասնում:

Հայաստանում բնակվում են զլիաւորապէս երեք ցեղեր՝ թիւրքերը, հայերը և քիւրքերը: Քիւրքը խաչնարած է և մասսամբ արհեստաւոր, թիւրքը մասսամբ երկրագործ է և մասսամբ արհեստաւոր, խոկ հայը տմեն բան է. Նա խաչնարած է, երկրագործ է, արհեստաւոր է և մեծ քաղաքներում վաճառական, կապահուու և արդիւնագործ: Քիւրքի կինը մասսամբ մասնակցում է մարդու պարտարմունքների մէջ, նոյնպէս պարտապում է մի քանի արհեստաներով, ինչպէս օրինակ՝ գորգեր, շալեր և կարպետներ գործելով, թէն քիւրք կանանց գործածը իր նրբութեամբ երբեք չէ կարող համեմատվել հայ կանանց ձեռքի աշխատանքը հետ:

Թիւրք կինը բուժովին ոչինչ չէ անում և թէ աղքատ և թէ հարուստ գասակարգերում սուեղծված է միմիայն մարդու բաւականութեան համար. թիւրք կինը հարեմի պարզն է միայն: Թիւրքերը թէն պարապում են երկրագործութեամբ, մեղուապահութեամբ և մասամբ պարտիզանութեամբ, բայց երբեք չեն հասնում հայի աշխատասիրութեան և նրանց աշխատաքի գերազանցութեան: Թիւրքը պարապում է միայն հետեւականներով՝ կաշկարութեամբ, կօշիկիների մասում:

այն էլ կոպիտ, երկու կրունկների վրա կօշիկներ (ջիսմա) պատրաստելով, որ ստորին ժողովուրդն է գործածում, կամ ձիութամբեր, լկամներ ու ձիու զարդարանիներ գործելով: Մի քանի տեղ թիւրքերը զինազործութեամբ էլ պարապում են, բայց նրանց շինած զէնքերը հայի շինած զէնքերից իրանց յատկութեամբ ստոր են: Նոյնպէս թիւրքերը փայտի վրա կոպիտ քանդակագործութիւնները (գդալներ, մանուկների օրորցներ և այլն) առնում են էժման գնով, մաքրում, գեղեցկացնում, նրբացնում են և աւելի թանգ են ծախում:

Ինչպէս երկրագործական բոլոր նո ըր պարապմունքները՝ զինեգործութիւնը, շերամապահութիւնը, կաթնային անտեսութիւնը հայերի ձեռքումն է, այնպէս էլ Հայաստանի բոլոր նուրբ արհեստաները հայի և հայունու ձեռքերից են դուրս գումար: Կաթնային անտեսութեան վրա խօսք զցելով, պէտք է յիշեմ այստեղ հայի և հայունու ձեռքով պատրաստվող բազմատեսակ և ընտիր պանիրը, օրինակ Յիսրիբի, Խոտորջարի և Համշէնի բուրդի պէս պանիրը, կամ երզրումի նահանգի Բասէն վիճակի բարակ թելերից բաղկացած պանիրը, կամ բարակ, թղթի պէս, թերթերից պատրաստվող սերը, վլրջապէս կօնսեր վի պէս պատրաստվող չորացած մածունը, որ կարելի է հիմեւ նրանից թան շնել (բագկաթեան): Ճշմարիտ, զարմանալի և հրաշալի են այն բոլոր աշխատանկները, որ կատարում է հայուն հին: Բայց տնային, ծանր անտեսութիւննից, տնային հոգսերից, իւրաքանչիւր հայ աղջիկ և կին, հարուստ թէ աղքատ, արհեստաներով է պարապում: Իւրաքանչիւր հայ ընտանիք հոգնում է իր տան մէջ պատրաստած քաթանի, կտուտի շապիկները և բուրդի հագուստեղէնները: Բայց սորանից հայուններ գործում է, մանում է, քաթաննեղէններ, կտուեղէններ, բամբակեղէններ, բուրդի և մետաքսի կերպառներ է զործում և ծախելու համար: Եւ այդ բոլոր նա գործում է անային, փայտեայ ամենանախապետական մեքենաներով, որոնք շինվում են տանը նոյն խոկ հայերի ձեռքով: Եթէ եւրօպացին

տեսնի հայուհիների ձեռքով գործված քաթանի բարակ շապիկ-ները, կամ բամբակի բրդոտ, բաղնիսի համար շապիկները և բրդոտ երեսարբիչները, որ մեծ մասամբ Տը ապիզօնի, Եւ-գօկի այի և Երգնկայի հայուհիներն են պատրաստում, կամ Բիթիսի հայ կանանց ձեռքով գործած կտուեղէնները (ՊՈԼՈՒԹ), Սվագի հարավի գորգերը, խալիչանները և կարպետները, Երգնկայի բամբակագործութիւնը, նոյն տեղի բրդեայ գուլաբաները, որոնց վրա, ինչպէս մագաղաթի վրա, կարելի է թանաքով գրել, Վանի փուլիկի աղնիւ մագից գործված շալերը, նոյն մագից պատրաստվող անձրել չանցկացնող կերպաններ, որոնք ճանապարհի վերարկուների համար են գործածվում, Եւ գօկի այի ի; Տը ապիզօնի և Գիարքէ իր ի շքեղ մետաքսագործութիւնը,—այդ բոլորը տեսնելով, ասում եմ, եւրօպացին չի հաւատայ թէ այդ կերպանները դուրս են եկել Հայաստանի կանանց ձեռքերից, գործված ամենանահապետական մեքենաների վրա, և ոչ թէ եւրօպական մի գործարանից....

Հայ կինը ունի իր աղջի բոլոր յատկութիւնները. նա աշխատաէր, խնայող և հաշող է: Աղքատ հայուհին այսպէս է սկսում իր աշխատանքը. նա խնայում է մի փոքրիկ գումար, այդ գումարով տունում է, դիցուք, մի պուդ բուրդ (կամ բամբակ), մանում է այդ բուրդը, և որովհետեւ մանածը աւելի թանգ արժէ, քան թէ հումը, նա փոխանակում է մանած նիւթի մի պուդը մէկ ու կէս պուդի վրա, կրկին մանում է և ստանում է զարձակ երկու պուդ, և այլն, մինչև որ այնքան ունի, որ կարող է արդէն սկսել կերպաններ պատրաստել: Հայ կինը Հայաստանում մի ըօպէ չէ կարող մնալ առանց աշխատանքի: Դիցուք մի կնոջ դատարան են կանչում մի գործի համար, հայուհին գիտէ որ ժամանակ պէտք է կորցնի,—և նա դատարան գնալով իր հետ տանում է իր թելը, բուրդը կամ բամբակ մանելու մեքենան: Մինչև որ նրան կը կանչեն, մինչև որ դատաւորը կը գուրս գայ, ժամանակ չը կորցնելու համար հայուհին դատարանի մէջ նստած մանում է, գործում է.... Այդ մեզ չէ յիշեցնում միթէ աշխատասէր գերմանուհուն, չէ յիշեցնում

մեզ Գերմանիա, որտեղ կանայք հասարակութեան մէջ էլ, թատրօնում, հրապարակական դասախոսութեան մէջ գուլպաներ են գործում... Հեռու Ասիայում, կարված լուսաւորված աշխարհից, աշխատասէր հայ աղջը իրագործել է իր ձեռվ կնոջ աշխատանքի լմնգիրը....

Հայաստանի բոլոր վարպետները, բոլոր արհեստաւորները հայեր են: Հիւսներ, քարտաչներ, պղնձագործներ, երկաթագործներ, ոսկերիչներ, փորագործներ, փացափ վրա նուրբ քանդակագործներ, արծաթագործներ, նկարիչներ, ճարտարապետներ,—բոլորն էլ հայ հն: Եւ գօկի այտնի է իր պղնձագործութեամբ և մասամբ արծաթագործութեամբ. այդ պղնձի նուրբ ամենները նորանով են յայտնի, որ ամենաթեթև կրակով կերակուրը նրանց մէջ են է գալիս: Այդեղ շինվում են շամագաններ, գդալներ, եկեղեցական անօթներ: Երկաթագործութեամբ և նուրբ, զանազան գաղտնիքներ ունեցող կողպէքներով յայտնի են Տը ապիզօնը և Երգուռմբ: Երզրումի մէջ ամենանուրբ կերպով փորագործ են ոսկով պողպատի վրա: Գիարքը էք իր յայտնի է իր գեղեցիկ ոսկեթեթև և արծաթաթեթև մանուածներով: Հայերն են պատրաստում Թիւրքիայում ամենալաւ գէնքերը. այդ զէնքերը այն յատկութիւնն ունեն որ նրանց կարելի է պահել անձրեկ տակ և ջրի մէջ անդամ դնել. բայց այնու ամենայնիւ հրացանը կամ ատրճանակը չեն վհանում և թաց լինելուց յատոյ նրանցից կարելի է խերթական ձակել: Այդ զէնքերի մետաղի բաղադրութիւնը պահպահ փութեամբ է պատրաստած, որ եթէ սխալմամբ հրացանը կամ ատրճանակը երկու անգամ լցնէք, այնու ամենայնիւ կարող էք արձակել և զէնքի բունը չի ճաքի: Պատերազմի ժամանակ երզրումի հայերը տեսան եւրօպական և ամերիկական կատարելագործված հրացաններ և խկոյն սկսեցին իրանց շինվող հրացանները կատարելապէս նմանեցնել Մարտինի ի, կամ ուրիշ սխստեմայի հրացաններին:

Երզրումի հարուստ աներում գուք կը տեսնէք պատերը և առաստաղները փայտից նուրբ կերպով քանդակագործված. դա հայերի ձեռքի աշխատանքն է: Վարպետները բուրն էլ

հայեր են. ոչ մի թիւրք վարպետ չը կայ: Հայերն են ամբողջ երկում միակ ճարտարապետները. դրան թող վկայ լինի այն, որ ոչ թէ միայն հայոց և կեղեցիների հրաշալի շնուռածները, բայց և մուսուլմանների բոլոր մզկիթները և մինարէները հայ ինքնուս ճարտարապետներն են կառուցել: Հայուստանի եկեղեցներում և մասնաւոր տներում կը տեսնէք պատերի և առաստաղի վրա նկարութիւններ, —զրանք ինքնուս հայ նկարիչների սուեղծագործութիւններն են: Դատ ժամանակ չէ երգորումի վիւայէթի մի գիւղացի հայ, առանց երրէք տեսած լինելու երօնական կատարելազործված երկրագործական մեքենաները, ինքն իր խեցով հնարել էր մի հնձելու միքենայ: Բայց ի հարկէ այդ գիւտը անուշաղիք է թողել թիւրք կառավարութիւնը: Վերջապէս հայերը քանդակագործում են գանազան փոքրիկ և գեղեցիկ ամենօրեայ կեանքին հարկաւոր իրեղէններ մալմարինից, փոքր դիրքով մարմարիօնից և կեղեցիների և մզկիթների օրինակներ են շնուռմ, եղջիւրից շնուռմ են գանակի կոթեր, ուս սաթից փոքրիկ շուրջուներ և մունդշատուկներ: Սյուպէս, ուրեմն, արհեստների մեծ մասը, ամենանշանաւոր և ամենանուրբ արհեստները թիւրքիայում հայերի ձեռքումն են:

Սյատեղ աւելորդ չեմ համարում յիշել մի մահմետականի, Խուր շիդէֆէնդիի, կարծիքը թիւրքերի մասին, որ 1862 թւին նա յայտնել է իր Ալիանէթ-Նամէ-Խուրզուդ վերնագրով գրքի մէջ: Ճեղնակը, այժմ Խուրզուդ-վաշա և մուշիր, ուղարկած էր որպէս պաշտօնական անձն, այսինքն որպէս քարտուղար այն յանձնաժողովովի, որ պաշտօն ունէր Պարսկաստանի թիւրքիայի սահմանագիծը որոշելու: *)

Ահա ինչ է ասում հեղինակը Վանի նահանգի մասին. Այստեղ բոլոր արհեստաւորները և երկրագործների մեծ մասը

*) Գիրքը թարգմանել է ուսուելին լիգուով պ. Գամազով և 1877 թ. հրատարակել է նրան այսպիսի վերնագրով „Сиахетъ-Намэ-И-Худудъ. Описание путешествия по турецко-персидской границѣ. С. П. Б. пер. М. Гамазова. 1877 г.“

հայեր են: Թիւրքերը բաղկալներ են միայն, և այն էլ մի քանի հոգի միայն: Մինչև անդամ ոչ թէ վարպետներ, բայց և օրական մշակներ չը կան մահմետականների մէջ: Հայերը աշխատող ժողովուրդ են, իսկ մահմետականները ընդհակառակն: Առաջ նրանք ապրում էին իրանց հողերի արդիւնքով, կամ պետական ծառայութեան մէջ էին: Մինչև այժմ չին կարող հրաժարվել աղայութիւն ից և անդործ ժամանակ են անցնում, մեծ մասամբ պանդոկներում և սրճանայններում: Մահմետականները (թիւրք և քիւրդ) անհոգ կհանք են վարում, բայց տեսնելով այդ տեսակի կեանքի ապարդիւն լինելը, վերջապէս, յոյս կայ որ սախալիք կը լինեն զործով պարապելու: Ահա մահմետականի կարծիքը մահմետականների մասին:

Նշանաւոր է որ հայ ժողովուրդը իրազործել է զրեթէ իր բոլոր պարապանունների մէջ աշխատանքի բաժնութեամբ: Արենսաները անցնում են հօրից որդի: Ոչ թէ միայն այլ քաղաքներ պարապում են այլ և այլ արդիւնագործութեան ձևողերով, բայց և գիւղեր մասնաւորած են իրանց աշխատանքը: Բաւական է յիշել Երզումի վիւայէթի Զիֆիկ գիւղը, որ միմիայն հիւսներից է բնակեցրած, կամ նոյն վիւայէթի Օզնի գիւղը, որի բոլոր բնակիչները քարտաշներ են:

Թիւրքիայի հայերը պարապում են նոյնապէս և քաղցրեղէնների և այլ ուտեկեղէնների պատրաստութեամբ: Ալապկերտ այտնի է իր քաղցրահամ պատեղներով, Յիսրիք, Թօրթում և Ալին իրանց չորացած մրգելով, մանաւանդ հոչակիած է այդտեղի չորացած թութը: Հայերի ձեռքիցն է զուրս գալիս Պիարբէքիրի սուլջուսը (չուրչիսելա), հայերն են պատրաստում մսի ապուխտ և նոյնապէս երեխի բաստուր ման՝ այդ ասիսկան մսեղէն չորացած կօնսէրվը, որ պահվում է առանց փշանակու մի ամբողջ տարի: Հայերի ձեռքիցն է զուրս գալիս և զառը ման (չորացած ոչխարի միս) որ գործ է ածում թիւրքաց զօրքը, որպէս ուտեկիք պաշտօնելն, մի անդից միւս տեղ չուելու ժամանակ: Հարուստ մահմետականները զործ են ածում այդ չորացած մսեղէնները, մասնաւանդ բաստուրման, իրանց օրու ջի ժամանակ, որպէս ամենասննողարար կերպակուր:

Որտեղ հայերը ապրում են, ամեն տեղ յայտնվում են նը-
րանց ձիբքերը, ընդունակութիւնները, անտեսական, ընկերա-
կան ոգին և կուլտուրական (քաղաքակրթական) յատկութիւն-
ները: Բացց ուշադրութեան արժանի է, որ աւելի էլ յայտնվում
են այդ յատկութիւնները, երեան են գալիս աւելի պարզ և հա-
մոզիչ կերպով, որտեղ հայերը ապրում են անխառն, ազատ
քիւրզի կամ թիւրքի ապականող տպգեցութիւնից: Վորան պ-
մենալու ապացոյց կարող են լինել այնպիսի տեղեր, ինչպէս
Զէջթուն, կամ Խոտոք ջուր: Խոտոքջուրի հօթ թէ ութ
գիւղեր ներկայացնում են զուտ հայոց տարրեց, թէև կաթօլիկ
հուատով, բաղկացած փոքրիկ հանրապետութիւն:

Զարմանալիք բարձութիւն և ընկերական ողի է տիրապետում Խոսորջուրի համայնքի մէջ, Կոպիտ, մեծ մասում՝ անդրագիտ լառնաբնակ խոսորջուրցիները, որոնց ներկայացուցիչներին մենք շատ անդամ տեսնում ենք Թիֆիոսւմ հայթուխների (փունչի) պարապմունքի մէջ; ունեն իրանց հայրենիքում հետեւալ ընկերական կանօնները, երբ նրանցից մի ընտանիքի հայր գնում է օտարութիւն, նրա համայնքը պարտաւորվում է պահել և կերակրել իր հաշով գաղթականի ընտանիքը, մինչև նրա վերադարձը, կամ մինչև որ նոյն ընտանիքի մի արական զաւակ հասակ կառնի և կը կարողանայ իր աշխատանքով պահպանել իր ընտանիքը: Երբ որդին մեծանում է և կարողանում է իր ընտանիքը իր ձեռքերի վաստակով պահել կամ եթէ պահպախա հայրը չէ մեռնում օտարութեան մէջ, այլ վերջը վերադառնում է հայրենիքը, — հասարակութեան հաշով պահպան ընտանիքը, որպէս վարձատրութիւն իր համայնքի կողմից իրան արած լաւութեան փոխարէն, պարտաւոր է մի որ և է նույը անել և կերպարան: Հաօտրակութեան սովորութիւնները այնպէս են, որ եթէ մի կին այրիացաւ և կամնում է կրկին մարգու դնալ, նա պիտի այդ քայլը մեծ զգուշութեամբ անի, որովհեան եթէ իր զաւակների թւում գոնէ մի աղայ զաւակ կայ, այն ժամանակ կնոջ համապը երկրորդ անդամ պատկիւը պարապահի է համարվում: Հարսանիքի ժամանակ նուազութունները (խոսորջուրցիները առանձին ձիրք ունեն դէպի երաժշ-

տութիւն), երբէք զրամական վարձատրութիւն չեն աւելում, որովհետեւ ուրիշի ուրախութեան ժամանակ, նրանց համովունեցով, չէ կարելի շահասիրական ակնկալութիւններ առնենալ: Եթէ մի խոսքը ջուրցիւրցի իր սեփական ջաղաց չունի, որ կարողանայ իր ցորենը աղալ, հարեանը, երկրի սովորութեամբ, պէտք է թոյլ տայ նրան իր ջաղացում անվարձ աղալ ցորենը: Եթէ մէկը եղներ չունի, որ հաւաքած հունձք դաշտից բերի, հարեանները պէտք է նրան իրանց եղները տան, և այլն: Խոստորջուրցիները իրանց աշխատասիրութեամբ, իրանց տոկունութեամբ շատ նման են մեր ազուրեցիներին: Նոյն բնկերական ոգի, որ կայ Խոստորջուրի մէջ, տիրապետում է և Զէյթունի հայերի մէջ, որոնք նոյնական անհասան են բնակվում: Զէյթունի մէջ, օրինակ պատերազմի ժամանակի, բոլոր բնակիչների ունեցածը, զէնքը, վառ օղը, հացը, ուտեևիքները, բնակարանները, —բոլոր գառնում է բնդհանուր սեփականութիւն:

Ես վերջացրի փաստերը, իբողովթիւնները, վերջացրի լու գուախօսովթեանս նկարագրական մասը։ Եւ նախ քան անցնեմ ընդհանուր հայեացքներին, թիւրքաց հայերի անտեսական ընդհանուր գրովթեան նկարագրովթեանը, իմ սեփական դատողովթիւններին և հաւաքած փաստերից գուշը բերած երաժկոցութիւններին, —պարստաւորովթիւննեմ համարում յիշել այստեղ որ իմ հաւաքած տեղեկովթիւնների վերաստուգելուն զբախաւորապէս ինձ օգնել են երկու պարոններ։ Միննէ պ. Կարապէտ էֆէնդի Շարանեան, որ ինքն էրզպումզի, ուրիմն հայաստանցի լինելով, լաւ ծանօթ է Հայաստանի հետ, միւսը Մշակի աշխատակից պ. Գրիգոր Նիկողոսի ան, որ ինչպէս ուսւաց զօրքի օֆիցէր, վերջին պատերազմի ժամանակ զօրքի հետ Հայաստան էր գնացել, ուրիմն նոյնպէս լաւ ծանօթացի է Հայաստանի հետ։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ծագումը, լեզուն, ուսումնարաններ եւ կուլտուրական սկզբունքներ: — Հայոց հնութիւնները: — Երկու զծեր հայոց պատմութիւնից. նորութեան բացակայութիւն եւ կրօնական ազատութիւն: — Ի՞նչ հայերը Թիւրքիայում պակասում են Ծմով: — Հայ մահմետականները: — Քիւրդերի եւ Թիւրքերի յարաքերութիւնը դէպի հայերը: — Հարկեր եւ հոդային յարաքերութիւններ: — Քէզեր: — Թիւրքաց օրէնքներ եւ Թիւրքաց կամացականութիւն: — Քերինի կօնզրէսը: — Եւրօպայի անձանօթութիւնը հայերի քաղաքակրթական յատկութիւնների հետ: — Եւրօպական քաղաքան սկզբունքը. զէնքեր եւ ապստամբութիւն, որպէս պայման ազգերի վերածնութեան: — Հայոց ընտառութեան յատկանից մի զիծ. իսաղաղ կուլտուրական մաքառում, փոխակակ զինված կուի:

Այժմ ինքն իրան հարց է առաջարկում. Բնչի հայերը, որոնք այդքան նշանաւոր կուլտուրական յատկութիւններ ունեն, չեն կարող յազմող հոնդիսանալ իրանց շրջապատող, զարգացմանը իրանցից հագար անզամ ստոր, կիսավայրինի ցեղերից, նրանց մէջ մտցնել քաղաքակրթութիւն. Քաղաքակրթութեան գործի մէջ յազմող են հանդիսանում այն ցեղերը, ողգութեան անհատները, որոնք Փիվիքապէս, բարոյապէս և մատորապէս աւելի զօրեղ են: Հայը, համեմատելով Թիւրքիայում իրան շրջապատող ուրիշ ցեղերի հետ, ունի բոլոր կուլտուրական յատկութիւնները: Ասենք թէ հարց ունի և խոչը պակասութիւնները իր մեծ արժանաւորութիւնների հետ միասին. անմիաբանութիւն, անհաշա սպիտու, նախանձ, — բայց դրանք բոլորն ել գարեւոր ողորկութեան հետեանք են մահմետական ախ-

րապետութեան տակ: Ազատութիւնը չէ կարելի սովորել սորկութեան մէջ. միայն ազատութիւնն է վարժեցնում ազատութեան մէջ: Եթէ հայը կազմավէր թիւրքաց տիրապետութիւնից, — և նրա այդ անմմիթար յատկութիւններն ել կանհետանային:

Ո՞վեր են հայի հարեանները. թիւրքերը և քիւրդերը: Ոչ թիւրքը և ոչ քիւրդը չունեն անցեալ, չունեն պատմութիւն, չունեն գրականութիւն, չունեն ուսումնարաններ, չունեն տընտեսական, արգիւնագործական ոգի, չունեն աշխատասիրութիւն: Բնութիւնը չէ ստեղծել բոլոր ցեղերը միակերպ ընդունակ ուղեղով: Գոյութեան կուեի մէջ ազգի որբանութիւնը, բաղմութիւնը, թիւր այնքան նշանակութիւն չունի, որքան նրա յատկութիւնները: Ոչ թիւրքը և ոչ քիւրդը չունեն քաղաքակրթական, զարգացման ընդունակ լեզու: Կան լեզուներ, որոնք ինչքան ել զարգանային, տարրական, կամ շատ շատ միջնակարգ զպրոցի զարգափարներից բարձր չեն կարող զարգանալ: Ամեն լեզուին վիճակված չէ զառնալ քաղաքակրթական լեզու: Այդ պատճառով մարդկութիւնն ընդհանուր երջանկութեան համար անկուլտուրական ազգերը պէտք է կու զնան քաղաքակրթական ազգերի մէջ, պէտք է իմրդին զօրեղ խմբերի հետ, պէտք է լուծվեն վերջինների մէջ: Եւ զօր և զ բառով չը պէտք է հասկանալ բ զ մ ա թիւ բառը: Փոքրաթիւ ազգութիւնը, եթէ նա քաղաքակրթական բոլոր յատկութիւններ ունի, կարող է կլանել աւելի բազմաթիւ ազգութեանը: Թիւր այդտեղ ոչինչ նշանակութիւն չունի: Բայց և թուով հայը իր բուն հայրենիքում, Մեծ-Հայաստանի մէջ, աւելի բազմաթիւ է, քան թէ նոյն երկրում ընակվող ուրիշ ցեղերը, միասին վեր առած:

Եթէ ի նկատ առնենք այն երեք վիլայէթները (Վան, Երզրում, Դիարբէքիր), որոնց համար հայոց պատգամաւորները Բնիլինի կօնզրէսում ինքնավարութիւն էին խնդրում, կը յայտնի կօնզրէսին նրանց ներկայացրած «Օրբանական կանօնութրութիւնից», որ Մեծ-Հայաստանի ազգաքնակութիւնը, հանելով ընդհանուր թւից Ռուսաստանին նոր միացրած Կարսի նահանգի ազգաքնակութեան թիւր, հետեւալ մեծ խմբերի վրա է բաժանվում: Ընդհանուր թիւր երեք վիլայէթների ազգաքնակու-

թեան 2,062,300 է, որից հայերը 1,330,000 են, թիւրքերը 530,000 են միայն, քիւրգերը 120,000 և ուրիշ մանր ազգութիւններ միասին 82,300 են: Աւրեմն թւով էլ հայերը գերազանցում են ուրիշ ազգութիւնների թւոց իրանց հայրենիքում: Դիու այս թւերի մէջ յիշված չեն բազմաթիւ մահմետական հայերը:

Բայց ինչ են հայի քաղաքակրթական յատկութիւնները, համեմատելով իրան շրջապատառ միւս ազգերի յատկութիւնների հետ: Հայը ցնողով սպատկանում է եւրօպական ընտանիքին, այդ ընտանիքի ամենահին ճիւղերից մինին. Հայը ունի հինգ ժամանակակիցին լեզու, որ ազգակից է եւրօպական լեզուներին և որ վաղուց է որ իր վրա գարձրել է եւրօպացի գիտնական լեզուագէնների ուշադրութիւնը, հայը ունի նոխ հինգ գրականութիւն, հարուստ, ձգական ժամանակակից կենդանի լեզու, անթիւ կենդանի բարբառներով, նոր զարգացնող և ընդունակ ժամանակակից մամև, հայը ունի իր հնագարեան ազգացին եկեղեցի, հայը միակ ազգ է, որ ամբողջ Փոքր-Ասիայում ունի փոքր և շատէ օրինաւոր ուսումնարաններ, հայի ընտանիքը, իր բարքը ու վարքով, իր աշխատասէր կանանցով, իր նահապետականութեամբ, իր խնայողական սպով գերմանական ընտանիքի նախատիպն է, հայը ունի ամեն տեսակ ձիքեր, արգելուազործական նուանդուա տնտեսական ողի, ունի անսպառակի աշխատամիտութիւն և տոկունութիւն: Կտրված ամբողջ լուսաւորված աշխարհից, հայը Աստիպում եւրօս ու այս ի է. նա չէ տերում, չէ սպառում բնութեան հարստութիւնները մնացած ասիական ազգերի պէս, այլ իր ոյժերով նորոգում է և միշտ նորոգել է, իր կարողութեան չափ, բնութեան ոյժերը: Հայը ջրանցքներ է շինում, որտեղ ջուր չը կայ, ցանում է անտառներ, ցանում է արօններ, լաւացնում է բոյսերի և կենդանիների տեսակներ, ինչպէս ամենակիրթ եւրօպացին է անում:

Հայի անցեալ պատմութեան փառքը վկայում են Հայաստանի մէջ մինչև այժմ մնացած փառաւոր շինքերը և նրանց աւերակները: Գուք կարծում էք որ ևս անսպառա կը խօսեմ

Անի ի աւերակների վրա, որոնք միակ յայտնի են Եւրօպացին և որոնց մասին նորերումս մի գերմանացի հեղինակ՝ պ. Կիրիլով, խօսել է իր գեղեցիկ գրուածքի մէջ, անուանելով այդ աւերակները «Վերերկրեայ Պօմպէի»: Բայց ինքն Անին ոչինչ է, համեմատելով Հայաստանի ճարտարապետութեան ուրիշ հրաշալիքների հետ: Ի՞նչ կասէին Անի աւենողները, եթէ աւենէին Թոռթումի հրաշալի եկեղեցին, կամ Ս վագի Ս. Նշան վանքը, որի ամբողջ ներսը մօգակեց է կաղմաքած, կամ Ք և Օ պերիք եօյի կամուրջը, որի մի կամարը կարրվելով, ոչ ոք չը կարողացաւ նորոգել և թիւրքերը հրամացեցին այդ կամարը քարերով և աւազով լցնել ներքեցից մինչև վերեւ: Աւանդութիւնը ասում է, որ մի հայ իշխանունի է շինել տուել այդ կամուրջը: Այդ ահագին, հոյակապ, մի և նոյն ժամանակ թեթի քարեայ շինուածքը, որի կամարների ներսը գարդակ է, զարմացնում է ամեն տեսողին:

Ի՞նչ կասէին եւրօպացիները, եթէ այցելէին Եփրատի եղերքին, Ա ամախի մօտ գանվող ստորերկրեայ զօրանոցները և պալատները, որոնք տաշած են ամբողջապէս միակտոր ժայռով մէջ: Տեսնողները ասում են, որ Կամախի ստորերկրեայ ժայռով մէջ տաշած զօրանոցների առջե, որտեղ կարող են տեղաւորվել հազարաւոր զօրքեր, ստորերկրեայ իշխանական պալատների առջե, իրանց հրաշալի գահիներով, սրահներով և ննջարաններով նսեմանում է Անիի փառքը: Զարմանում են թէ անգլիացիները տօնէլ են շինել Տէմլ գետի տակ, իսկ մի քանի հարիւր տարի սրանից առաջ հայոց հանձտոր իրազործել է Կամախի ստորերկրեայ պալատներից և զօրանոցներից, Եփրատ գետի տակով մի անցքը, որտեղ մի ձիաւոր ազատ կարող է անցնել: Ճանապարհը Եփրատի տակով անցնելով տառնում է գէպի գետի միւս ափին գանվող, նոյնպէս ժայռի մէջ տաշած եկեղեցին:

Եթէ հայերի վերև յիշված բոլոր քաղաքակրթական յատկութիւններին աւելացնենք երկու, երեք գծեր հայոց պատմութիւնից, զուք անշուշտ կը համովվեք, որ հայոց ազգը Թիւրքիայում կատարելապէս իրաւունք ունի ձգաել գէպի ինքնավարու-

թիւնը, իրաւունք ունի և կարող է, ընդունակ է քաղաքական կեանքով ապրելու: Աշխարհիս ամենալուսաւորված ազգերը մի ժամանակ ունեցել են սարկութիւն, կամ գոնէ ճորտութիւն,— իսկ հայերը իրանց պատմութեան ամբողջ ընթացքի ժամանակ երբէք չեն ունեցել ոչ սարկութիւն, ոչ էլ ճորտութիւն: Ամեն ազգ ունեցել է կրօնական մոլուսնութեան պերփոդներ, երբ անհամբըրող է եղել գէպի այս կամ այն կրօն, հալածելիս՝ է եղել այս կամ այն հաւատ: Իսկ հայոց քաղաքական անկախութեան ժամանակ, թէ կրակապաշտութեան և թէ քրիստոնէութեան ժամանակ, տիրապետել է միշտ կրօնի կատարեալ աղատութիւնը: Հայերը պատերազմել են, արիւն են թափել իրանց կրօնը պաշտպանելու համար, բայց ուրիշ կրօնը երբէք չեն հաւածել:

Ոչ մի ազգ չը կայ աշխարհիս երեսին, որ մի ժամանակ հալածելիս չը լինէր հրէաներին,— իսկ հայերը իրանց քաղաքական անկախութեան ժամանակ, թէ կրակապաշտութեան և թէ քրիստոնէութեան ժամանակ, հրէաների բազմաթիւ գաղթականներին իրանց մնացած հպատակների հետ կատարելապէս հաւատար քաղաքական իրաւունքներ էին տուած: Հայերը աշխարհիս երեսին քրիստոնէական վարդապետութիւնը ընդունող առաջին ազգ էին, բայց մի և նոյն ժամանակ նրանք երկրագիտակ ազգ էին, որ երբէք չը հալածեցին հրէաներին: Այդ էր պատճառը, որ Հայաստանի հրէաների մեծ մասը հայերի հետ ձուլմեցին:

Եթէ հայերը ունեն այդ բոլոր քաղաքակրթական յատկութիւնները, ունեն այդքան հասունացած քաղաքական ողի, ինչի նրանք յաղթող չեն հանդիսանում թիւրքերի և քիւրգերի գէմ, այլ ընդհակառակին, հայը Հայաստանում անդադար թւով նուազում է, տարուց տարի ոչնչանում է, գաղթում է իր հայրենիքից, կամ հայերի ամբողջ վիճակները թիւրքանում են, մահմետականութիւն են ընդունում, ինչպէս օրինակ, Օլթի ի զրեթէ ամբողջ գաւառը, որ այժմ Ռուսաստանի ձեռքն է անցել, կամ Թուրքում մի վիճակը, կամ Համշէնը, որոնք ընակեցրած են մահմետականացած հայերով: Համշէնի հայերը շատ հին ժա-

մանակներում ընդունեցին մահմետականութիւնը, իսկ Օլթի վիճակի հայերը մի հարիւր տարի սրանից առաջ թիւրքաց ըռնի ոյժի բարբարոսութեան տակ ստիպվեցան ընդունել իսլամը: Մինչև այժմ կը զրում վիլայէթի մահմետական գլուզերից շատերը, որոնց բնակիչները կոչվում են Ալի-Փօղոս, Կարապիտ-Ղլի, կամ Ցովհաննէս-Մահմադ-Ղլի, իրանք էլ կրում են բուն հայոց անուններ, ինչպէս Ագարակ, Ամուզով, Պարտէզ, Երիցաձոր, Քարեկամուրջ, Այգեպատ, Պատնաշէն, Ս. Օհան, Համշէն և այլն....

Ի՞նչի հայերը, որոնք բացի իրանց կուլտուրական յատկութիւններից, ամեն տեղ, որտեղ նրանք ապրում են, չը նաև ի աջող կամ անաջող տնտեսական հանգստանքների, հակումն ունեն գէպի կանոնաւոր բազմանալը, ինչի Թիւրքիայի հայերը, ոչ թէ միայն չեն բազմանում, այլ և օրից օր պակասում են թւով: Այդ այն պատճառով է, որ Թիւրքիայի հայը չունի ազատ մրցելու իրաւունք, որ նրա վրա ձնչում է արուեստական, սիստեմական վարչական ձնչում, որին չէր դիմանայ, այդքան գարերի ընթացքում, երօպական ազգութիւններից ոչ մին, այն պազութիւնները, որոնց մեծ մասի ներկայացուցիչները արդքան արհանդարնանքով մերժեցին թիւրքաց հայերին նըրանց պահանջած ինքնավարութիւնը:

Քիւրդը թափառական, վրանարնակ կեանք է վարում. նրա զվարացունքը պարապմունքը աւազակութիւնն է: Որտեղ քիւրդը ընակլում է հայի հետ, նա հայի ծառայ է, նրա ոչխարների հովիւ է, կամ նրա ձիերի երամակների պահող է: Քիւրդը իրան ձևացնում է հայի բարեկամ, հային հաւատարիմ. նա խօսում է հայերէն, ազօթում է հայոց եկեղեցու մէջ, մատադ է անում հայի սրբերին, մնում է հայի տանը, որպէս նրա ամենահաւատարիմ ծառայ տարիներով,— բայց հէնց որ կը ներկայանայ մի աջող զէպք, քիւրդը յանկարծ վախչում է հայի տանից, հաւաքում է աւազակների մի խումբ, կամ միանում է աւազակների՝ արդէն կազմված մի խումբին և վերագաւառում է որպէս հայի թշնամի, կողովառում է հային, սպանում է նրան, բանարարում է նրա կնոջ և աղջկան և սեփականացնում է հայի.

ամբողջ կտյրը, առերում է նրա տունը, կրակ է տալիս նրա դաշտերը և այգիները:

Թիւրքը անդործ, անհոգ, ձրիակեր մի էակ է: Նա սովոր է միմիայն հրամայելու, նա պահանջում է որ ուրիշները նրան հնապանդիւն: Նա հաւատացած է, որ ստեղծված է հրամայելու, իսկ ուրիշները ստեղծված են աշխատելու: Նա աշխատանքը ստոր պարագմունք է համարում: Թիւրքը ապրում է հայի հաշւով:

Հայը վճարում է տէրութեանը օրէնքով հաստատված զրլիսարկը, որ թիւրք պաշտօնեայ հարկանանը կամայական կերպով չատ անդամ սահմանված չափից աւելի է վերցնում հայից: Հայ գիւղացին, բացի զիլսահարկից, վճարում է տէրութեանը իր բերքերից տասանորդն էլ: Վալին տասանորդի հաւաքելը յանձնում է մի որ և է կապալառուին, որ ի հարկէ, զեղծումներ է գործում և տասանորդից աւելի պահանջում, մանաւանդ որ ինքն վալին նպաստում է այդ զեղծումներին: Փաշան մի պայմանով միայն յանձնում է կապալառուին տասանորդի հաւաքելը, որ սա պարտաւորվի հաւաքածից մի մասը իրան տալ: Հայ քաղաքացին մի առեարական գործ, մի արդիւնագործական ձեռնարկութիւն է սկսում, մի արքունի կապալ է յանձն տունում,—փաշան, կայմակամը, միւղիրը, փաշաջի օգնականը, նրա քարտուղարը.... ստենքը իրանց մասն են պահանջում հայից, որովհետեւ հայը շահվում է: Հայը իրաւունք չունի շահվել ոչ մի աշխատանքի, ոչ մի ձեռնարկութեան մէջ, տասանց իր շահերի մի մասը թիւրքին տալու:

Հողերը թիւրքիայում լինում են միւլք (սեփականութիւն), թափու (կապալով վերցրած, վարձված), վակ Փ (մզկիթների և եկեղեցների սեփականութիւն) և մահլուլ (անտէր, անժամանդ մնացած հողերը): Հայ գիւղացին թիւրքիայում, թէի ունի սեփական հողեր, բայց այդ նրա իրաւունքի դէմ, ինչպէս իսկոյն կը տեսնենք, զեղծումներ են գործվում: Այն հողերը, որոնք մահլուլ են մնացել (անտէր, անմշակ, անժամանդ), տէրութիւնը սեփականացնում է և զիւղացիներին, կամ կալուածատէրերին ծախում է, թափու է տալիս, յանձնելով

մի և նոյն ժամանակ առնողին մի կալուածագիր, բայց առնողը սեփականատէր չէ զաւնում, այլ վայելում է միայն հողի գործադրութիւնը, իսկ թափու տուած հողի տէրը դարձեալ տէրութիւնն է մնում: Վակ Փ համարվում է մզկիթների և տահասարակ եկեղեցիների սեփականութիւն, բայց երևում է, որ քրիստոնէական եկեղեցիները և վանքերը իրաւաբանական անձնաւութիւններ չեն համարվում, որովհետեւ, ինչպէս տեսնում ենք Կ. Պօրի հայոց պատրիարքարանի պաշտօնական տեղեկագիրներից, հայերը անդադրու գանգատվում են, որ վանքերի և եկեղեցիների կալուածները մահլուլ են յայտնվում և տէրութիւնը առանց այլեայլութեան նրանց ծախում է և թափու է տալիս մասնաւոր անձնանց: Արօան երբ, առհասարակ, տէրութեան սեփականութիւն են համարվում. գորան ապացոյց թող լինի այն ծանր հարկը, որ վերցնում է տէրութիւնը իւրաքանչիւր ոչխարից, իրը իր արօաների վրա արածացներու իւրաւունք ունենալու համար: Խւրաքանչիւր ոչխարից տէրութիւնը տարեկան Յ զրու (20 կօպէկ) հարկ է վերցնում: Հայ զիւղացին վճարում է տէրութեանը զիլսահարկ, վճարում է իր բերքից տասանորդը, վճարում է զինուորական հարկ (որովհետեւ վինուր չէ տալիս և այդ հարկը պահանջելու ժամանակ նոյնպէս անթիւ զեղծումներ են կատարվում), վճարում է ոչխարի հարկ, վերջապէս կալուածական հարկ: Ահա ինչ է երեսում տասանորդի հարկը պահին պատրիարքարանի գանգատներից, իրը որ բերքը ծախում է, լաւ զին ունի, տասանորդի հաւաքող կապալառուն տասանորդը ստանում է առաւելութեամբ, իսկ երբ որ նա զին չունի, կապալառուն թանդ գնահատելով բերքը, փողն է պահանջում:

Կալուածական հարկի հաւաքման մէջ հետեւելու է պատահում: Մի վիճակից, կամ մի գիւղից, որտեղ հայերը խառն են բնակվում մահմետականների հետ, մի որոշված շափով կալուածական հարկ է պահանջվում, որ բաժանվում է կալուածատէր հայերի և թիւրքերի վրա (բաժանողական հարկ, repartitions Steuer): Բայց հայի կալուածները միշտ թանդ են գնահատվում, քան թէ մուսուլմանների կալուածները և հայը

միշտ ստիպված է աւելի վճարելով լրացնել պահանջվող հարկի ընդհանուր գումարի մէջ այն, ինչ որ կողմնառահութեամբ հարկանան պաշտօնեան պակաս է պահանջել մահմետականից:

Հայ զիւղացին բնակլում է կամ իր սեփական հողի վրա, կամ թափու առած պետական հողի վրա: Բայց պատրիարքարանի պաշտօնական տեղեկադիրների մէջ անթիւ գանգաներ կան, որ հայի հողը շատ անդամ անիրաւութեամբ անցնում է թիւրք կամ քիւրդ բէգերի ձեռքը և նրանց սեփականութիւն է դառնում: Այդպիսով հայը, որ իր պատութեան մէջ երբէք ճորտութիւն չէ ունեցիլ, զառնում է գերեք է գերի ճորտ: Եւ հայը բէգի հողի վրա ապրելով, բացի բոլոր վերեւ ձիշված հարկերից, ստիպված է և իր բէգին վճարել կալուածական հարկը և իր բէրքերից տասանորդը: Գանգաներից երեւում է, որ հայերի մտսնաւոր հողերը սպահոված չեն կամացականութեան դէմ: Հայը վճարում է աէրութեանը պահանջվող հարկերը, օրնքով սահմանված չափոց աւելի, ստիպված լինելով վալիին, կայմակամին, միւզիլին և վերջին զավթիլին կաշառքներ տալ: Նա վճարում է հարկ բէգին, կերակրում է նրան, իսկ բէգը ձեռները ծարած անդործ նստած է: բացի սորանից նա պէտք է զօրք պահնի, որ իր զիւղով է անցնում, բայց այդ զօրքը, որին նա պահում է, չէ պաշտամանում նրան քիւրդի տւաղակութեան դէմ: Քիւրդ տւաղակը խրում է նրա ունեցածը, անարդում է նրա ընտանիքը.... Խոկ վերջին ժամանակները հարկերը գործեալ գժուարացան և նրանով, որ աէրութիւնը չէ ել ընդունում թղթադրամ հարկաւուներից....

Հայը իրաւունք չունի շահել ոչ մի գործի մէջ, տառաց իր շահերի մի մասը տէրսաթեան պաշտօնաներին տալու: Հակառակ գէպքում նրան սպասում է բանար, կամ աքսորանքը: Կամ եթէ հայը իր խելքով, իր ճարապիկութեամբ, իր եռանդով մըցում է մի նշանաւոր թիւրք անձնաւորութեան հետ, նրան լոյս ցերեկով սպանել կը տան, ինչպէս, օրինակ, սպանել տուեցին քանի մի տարի սրանից տառաջ, փաշացի ներկայութեամբ, երզումցի Խաչտառը էֆէնդի Բաստուր մաջեանին, իրկ-

թի մէջ ամենահարուստ, ամենանշանաւոր, ամենամեծ հեղինակութիւն ունեցող մարդուն....

Այդ տեսակ հանգամանքներում ինչ հնար կայ առաջադիմութեան սպասելու, ինչ հնար կայ արդիւնապործական ընկերութիւններ, շահաւէտ ձեռնարկութիւններ, բաժանորդական, կամ այլ ընկերակցութիւններ իրազործելու....

Ասում են որ Թիւրքիայում գրված օրէնքներ կան: Բայց այդ օրէնքները մնում են մեռած տառեր: Հայը, որպէս քրիստոնեայ, իրաւունք չունի Թիւրքիայում զէնք կրելու, իրաւունք չունի, որպէս քրիստոնեայ, զատարաններում վկայութիւն տալու: *)

Ուրեմն հայի մի կողմը՝ կանգնած է նենդաւոր, բարբարոս, աւտովակ քիւրդը, միւս կողմը՝ ձբիակիր, ծոյլ, կաշառակիր թիւրքը, իսկ նրա վրա իշխում է մի տէրութիւն, որ նայում է հայի վրա ինչպէս մի կաթնասու կովի վրա, մինչև անդամ տառաց հոգալու, լաւ տնտեսի պէս, օրինաւոր կերակրելու և խացնելու այն կովը, որից նա աւելի կաթ է պահանջում, քան թէ նա կարող է տալ:

Թիւրքերը շատ լաւ են հասկանում հայի արժանաւորութիւնները, բայց այնու ամենայնիւ աշխատում են նեղել հայերին, եթէ կարելի է, զնցիլ նրանց երկրիս երեսից: Բարեկամներից մինը պատառում էր ինձ հետեւալը: Երբ որ ուռաց զօրքերը պէտք է գուրս գային երզումից և լուր տարածվեցաւ որ Երզումի հայերը գաղթելու են մեր զօրքերի ետքից գէպի Ռուսաստանի սահմանները, թիւրքաց տէրութեան ներկայացուցիչը երզումի մէջ Ալի-էֆէնդի Արաբ զադէ բացա-

*) Այսակ ևս պարաւարութիւն եմ համարում յիշել, որ թիւրքիայի մէջ հայպէն յարաբիրութիւնների մասին տեղեկութիւնները ևս զիսաւրապէս քաղեցի ն. Պօլսի հայոց պատրիարքաբանի տեղեկագիրներից և «Մշակի» մէջ անցկաներում տպված պ. Մէլիք զադէ ի յօդուածներից: Խոկ թէ հոգային յարաբերութիւնների և թէ հարկաւութեան մասին տեղեկութիւնների հշգութիւնը ինձ օգնեց վերաստուգելու թիւրքաց հայերի մէջ յայտնի մի զրոյ, պ. Ծերենց:

կանչեց մի մասնաւոր խօսակցութեան ժամանակ, Թող կորչեն այդ հայերը, իսկ նրանց տեղ թող գան այստեղ ոռուսահրպատակ մահմետականները, մենք գոնէ խիտ մահմետական ազգաբնակութիւն կունենանք, ազատ քրիստոնէական տարրից:

Այդ խօսակցութեանը ներկայ է գտնվում էրդրումի պարսկապատճ, Միրզա Ալապէր թանը. Շատ բարի, ասում է պարախց կօնսուլը, ասենք թէ հայերը բոլորն էլ զնացին Հայաստանից և նրանց տեղը եկան մահմետականները, բայց հարցնում եմ ձեզ, այն ժամանակ ովկ կաշխատի, ովկ արհեստներով կը պարապի այս երկրում, ովկ կը մշակի երկրը, ովկ կը տայ աէրութեանը հարկի մեծ մասը.... Հայերից, այդ աշխատող տարրից զրկվեռվ, կը զրկվէք ձեզ կերակրողներից, ձեզ կարող է սով սպառնալու, Ալի-էֆէնդին փոքր ինչ մտածելուց յետոյ, պատասխանեց. Այդ էլ ճշմարիտ է:

Եւ այդպիս նայում են հայերի վրա Թիւրքիայի պետական ամենաբարձր շրջաններումն անդամ: Թիւրքերը գիտեն, շատ լաւ են հասկանում, թէ որքան հայերը հարկաւոր են, անհրաժեշտ են Թիւրքիային, բայց այնու ամենայնիւ ասում են նրանց և սիստեմական կերպով ճնշում են նրանց:

Իսկ Եւրօպան չէ ճանաչում Հայաստանը և հայերին: Եւ հայոց խնդրի յարուցվելու ժամանակ Եւրօպան ուշագրութիւն չը դարձեց հայ ազգի արժանաւորութիւնների վրա, այլ պահանջում էր իր դիվլումատիական ազնաններից միմիայն թւեր հայերի մասին: Մի ազգի մասին տեղեկութիւն ունենալու համար չէ կարելի բաւականանալ միմիայն թւերով, վարվել ազգի հետ ինչպէս մի հօտի հետ, հաշւել, ինչպէս տաւարի գումաներ են հաշում.... Եւ կօնսուլները անձիգ տեղեկութիւններ էին տալիս: Օրինակ էրդրումի Փրանսիական կօնսուլ պլ. Ժիլի տեղեկութիւն տաեց իր կառավարութեանը, որ ամբողջ Հայաստանում կէ ու միւլիօն հայ կայ միայն.... Նշանաւոր է որ պլ. Ժիլի ինն տարի է, որ ապրում է Հայաստանում:

Յաւալի է որ Բերլինի կօնդրէսին ներկայացած հայ պատգամաւորները հոգեսրականներ էին: Բայց եթէ այդ պատգամաւորները աշխարհական, լուսաւորված մարդիկ լինէին, եթէ

փոխանակ ներկայացնելու այն անկենդան, մեռելածին օրդան նական կանօնադրութիւնը, որտեղ Եւրօպայի ուշագրութիւնը դարձնվում էր Հայաստանում բնակլուղ հայերի թւի վրա միայն, մեր պատգամաւորները ներկայացնէին հայոց ազգի անտեսական, կուլտուրական յատկութիւնների նկարագիրը, նկարագրէին հայերի քաղաքակարթական արժանաւորութիւնները, ներկայացնէին Հայաստանի պատկերը, ինչպէս նա կայ, հայերի, Ասիայի խորքերում բնակլուղ այդ Եւրօպացիների նկարագիրը, ինչպէս նրանք կան, -գուցէ արևմտեան Եւրօպան կը համոզվէր, որ Հայաստանը նոյնքան արժանի է ազատվելու թիւրքաց տիրապետութիւնից և անկախ քաղաքական կեանքով ապրելու, որքան այն երկիները, որոնք ազատվեցան թիւրքաց տիրապետութիւնից:

Ամբողջ Եւրօպայում գուցէ միայն Անգլիան շատ լաւ է ճանաչում Հայաստանը և հայերին, լաւ է ուսումնասիրել այդ երկրի բնական հարստութիւնները, այդ երկրի բնակիչների քաղաքակրթական յատկութիւնները: Բայց Անգլիայի թիւրքասիրութիւնը և հայերի պաշտպան չը հանդիսանալը, մեզ գուշակել է տալիս, որ Միհեծ-Քրիստոնիայի նպատակն է ոչ թէ օգնել Քրիստոնեաներին, այլ ձեռք գցել հարուստ երկիրը, Հայաստանը, աշխարհի չորս կողմը ցրվել տալով նրա ընդունակ բնակիչներին, հայերին, և բնակիցներ նրանց աեղ, նրանց հայրենիքում, նրանց ժառանգական հողերի վրա անգլիացի երկրագործներին և բանուրներին, անգլիական քաղցած պրօլէտարիատը, որից նրանց մայր-երկիրը շատ ուրախ կը լինէր ազատվելու, սօցիալական խնդրի սպառնող ճգնաժամից ազատվելու համար:

Շատ քիչ ցեղերին աշխարհիս երեսին վիճակված է եղել պատմութեան մէջ աւետել մարդկութեանը մի որ և է նոր, բարյոյական սկզբունք: Ամեն ազգ ունի, ի հարկէ, իր կոչումը, խաղում է մի յայտն դեր մարդկութեան մէջ, բայց ամենքը, օրինակ, հրէաներ, Փրանսիացիներ, կամ գերմանացիներ չեն.... Հրէաստանի հողի վրա երկու անդամ ծնվեցան մարդկութեան երկու ամենամեծ աստվածային վարդապետու-

թիւններ՝ Սովորսականութիւն և Քրիստոնէութիւն։ Յրանսիացինները իրանց մեծ յեղափոխութեան ժամանակ առեալեցին մարդկութեանը մարդու իրաւունքների գաղափարը։ Գերմանացինները ըւծայեցին մարդկութեանը բողոքականութիւնը...

Գուցէ և հայերին վիճակված է, թէև ոչ այնքան բարձր, բայց նոյնպէս մի նոր, քաղաքական սկզբունք աւետել մարդկութեանը, այն է, որ կարելի է հասնել ազատութեանը քաղաքակրթական խաղաղ պատերազմով, առանց ապատամբվելու, առանց պէնք բարձրացնելու։ Դարեւոր տանջանքներով, ամենօրեայ աշխատանքով, կուլտուրական խաղաղ կուտով, տոկուն կերպով մարտնչում են հայերը բարբարոսութեան և կամայականութեան, ապատութեան և գանապելիութեան, մի խօսքով բռնաւորութեան դէմ։ Գուցէ հայերին վիճակված է իրանց ըըսնած ընթացքով ոչնչացնել այն ժամանակակից բարոյական սկզբունքը, որ մեր լուսաւորված տասն և իններորդ դարում դեռ ևս ափառափետում է Եւրոպացում, որ լուսաւորված աշխարհի սկզբունքն ու գէվիզն է։ Ճե մ'insurge, donc je suis, ևս ապատամբվում եմ, ուրեմն ևս գոյութիւն ունեմ։ Խոկ հայերը կարծես, ասում են, ևս աշխատաւմ եմ, ևս տանջվում եմ, ուրեմն ևս գոյութիւն ունեմ։ Ահա, կարծես, հայերի նըշանաբնը։

Եւ ձմարիտ, ո՞րն է աւելի գժուաբը՝ ապատամբվել և մի քանի ամիս, գուցէ մշկ երկու տարի իր և թշնամու արխոնը թափել, թէ հազար տարի-շարունակ ամենօրեայ կուլտուրական սրատերագմ վարել ճնշող ոյժի դէմ։ Գուցէ հայերին, արհմտեան լուսաւորված Եւրոպայի ժամանակակից անմարդասեր գաղափարի դէմ այդ կենդանի բողոք ներկայացնող ազգութեանը, վիճակված է ոչնչացնել այն անբարոյական սկզբունքը, որ պահանջում է ճնշված ազգից, իր գոյութիւնը ապացուցաներու համար պէնք վերցնել, ապատամբվել, արիւն թափել, ուրեմն գործ գնել, ճնշաղ ոյժից, բարբարոսութիւնից աղատվելու համար, նոյն պէնքերը, որ նոյն խոկ ճնշող ոյժը, բարբարոսութիւնն է գործ ածում...

Եթէ Թիւրքիայի հայերը չը կարողանան յաղթող հանդի-

սանալ, կոչնչանան, կամ կը գաղթեն իրանց հայրենիքից, եթէ նրանց հայրենիքը կը գատարկվի իր ընիկ ազգից, — այն ժամանակ ամօթ այն Եւրօպային, որ չօգնեց նրանց իրագործել մարդկութեան ապագայ քաղաքակրթութեան սկզբունքը։

Խոկ եթէ նրանք, չը նայելով բալոր արգելքներին, բոլոր տանջանքներին, յաղթող կը հանդիսանան, — նրանք կը վաստակեն լուսաւորված այխարհին նոր սկզբունք, նոր նշանաբան աւետելու վասոքը՝ «Բաղաքակրթական, կուլտուրական, աշխատանքի պատերազմ», արիւնի-պատերազմի վոխանակ»։ Այն ժամանակ հայոց ազգը իր օրինակով կամաչացնի լուսաւորված և մարդասէր աշխարհը։

Սրգեօք կարողութիւն, համբերութիւն կունենայ Թիւրքիայի իր հատար տարվայ կուլտուրական պատերազմը մինչև վերջը նոյն ձևով առաջ տանելու և բազգաւոր վախճանին հասցնելու, թէ յուսահատվելով, համբերութիւնը կորցնելով, կը չեղի նա իր բնութեանը յատուկ բռնած ընթացքից, իր պատմական կոչումից և կը գիմէ այն միջոցին, պէնքին, որ ժամանակակից լուսաւորված աշխարհը միակ գրական և օրինաւոր միջոց է համարում մի ազգի համար իր գոյութիւնը վկայելու...»

Պէտք է խստառվանել, որ հայը ապացուցեց դեռ շատ հին ժամանակներից, որ հարկաւոր գէսքում, երբ այստք էր կամ իր հաւատը պաշտպանել, կամ մի պետութեան հպատակ լինելով, հարկաւոր էր արիւն թափել մանելով այն պետութեան զօրքերի շարքը, որ իր ձեռքը նոյնքան ընդունակ և վարժ է պէնք գործ ածել, որքան արօքը և բանը։ Եւ նոյն խոկ այս բօպէիս Զէյթունը արիւն է թափում Թիւրքիայի դէմ իր մարդկային իրաւունքները ձեռք բերելու համար։

Վերջին ժամանակ մեր լրագիրների թղթակիցները հաղորդում են, որ Թիւրքիայի հայը գրեթէ ամեն տեղ սկսում է է պինվեր։ Բայց արդեօք գորանով նա ընդգէմ է գնում իր ըըսնած պատմական ընթացքին.... Չեմ կարծում։ Եթէ հայը Թիւրքիայում գինվում է միայն նրա համար, որ բռնաւորութեան դէմ պաշտպանութեան պիտի միայն, և ոչ թէ յար-

ձակողական, եթէ Թիւրքիայի հայը մի ձեռքով մուրճ, ալոր կամ բահ բռնելով, միւս ձեռքով հրացան կը բռնի, — այդ գուցէ կը լինի միակ միջոց Թիւրքաց տիրապետութեան տակ ճընշված հայոց ազգի համար պաշտպանել և ապահովել իր ազգային գոյութիւնը:

Ես վերջացրի իմ դասախոսութիւնս և ինձ մնում է այժմ, տիկինն եր և պարոնն եր, չնորհակալութիւն յայտնել ձեզ, ձեր ինձ չնորհած ուշադրութեան համար: Եթէ երկու ժամ շարունակ դուք համբերութիւն ունեցաք լսել իմ խօսքը, ես այդ ձեր համբերութիւնը վերաբերում եմ ոչ թէ դասախոսութեանս ձեին, այլ նիւթի հետաքրքրութեանը, ձեր ազգասիրական զգացմունքներին և գլխաւորապէս այն բարեգործական նպաստակին, որ մեզ ամենքիս այսօր միացըել է այդ դահլիճի մէջ:

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՔԱՂՎՔԱԿԱՆ ԼՐԵԳԻՐ

(Հեղուագիր ԳՐԻԳՈՐ ԱՐԵՐՈՒԵՆԻ)

Հրատարակվում է՝ ՅՈՒՓԱԿԱՆ ՊՐԻՎԱՏ ՎՐԱՅԻՐ,
ՆՈՐ ԱՊՐԻԼ ԹԱՌԱՋՈՎ և ՆՈՐ ԱՎԱՐԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՋՈՎ:
«ՄՇԱԿ» ստանում է սեփական ՀԵՅԱԳԻՐՆԵՐ.

«ՄՇԱԿ» տարեկան գինը, թէ ՕՐՈՎԱՍՈՎԱՆՈՒՄ և
թէ արտասահմանում, 10 ըուբլի է, կէս տարվանը 6 ր.,
ամսական 1 ըուբլի:

«ՄՇԱԿԻՆ» զրպել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏՈՒՅՆ:

Կայորութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» զրպի-
լու համար, պէտք է զիմել հետհեալ հասցեալ. ՏԻՓ-
ԼИСТЬ, Ռեդակիա „ՄՇԱԿ“.

Արտասահմանից՝ Tiflis, Rédaction „MSCHAK“.

ՀՀ Ազգային գրադարս



NL0255031

